ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ՝ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, որը գտնվում է ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում, ստորև ներկայացնում է ՊԵԿ-ԲԸՀ-ԾՁԲ-16/2 ծածկագրով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով՝ բանակցային ընթացակարգի արդյունքում 2016թ-ի դեկտեմբերի 29-ին կնքված ՊԵԿ-ԲԸՀ-ԾՁԲ-16/2 ծածկագրով գնման պայմանագրում 2017թ-ի հունվարի 30-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Պայմանագրով սահմանվել է, որ դրանով նախատեսված ծառայության մատուցումը իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման նպատակով 30.01.2017թ. կնքվել է համաձայնագիր: Միաժամանակ 29.12.16թ. կնքված N ՊԵԿ-ԲԸՀ-ԾՁԲ-16/2 ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածվել են 2017 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

Փոփոխության հիմնավորում: Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման համար 2017 թվականի ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գ.Ղազարյանին:

Հեռախոս՝ 060 544-704:

Էլ. փոստ՝ gugks@mail.ru:

Պատվիրատու՝ **ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե**

Համաձայնագիր-1
29.12.16թ. կնքված N ՊԵԿ-ԲԸՀ-ԾՁԲ-16/2 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան « 30 » հունվարի 2017թ.

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա.Սահակյանի մի կողմից, և «Արեմպա Ինթերնեյշնլ» ՍՊԸ ՖԶԵ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս Ընկերության լիազորված անձ Լ.Տեգեյի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 29.12.16թ. կնքված N ՊԵԿ-ԲԸՀ-ԾՁԲ-16/2 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.3-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1.1. Պայմանագրի 7.1 կետին համապատասխան հաստատել 2017 թվականի ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի/կցվում է/:

1.2. Սահմանել, որ Պատվիրատուն պայմանագրով նախատեսված մատուցված ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն համաձայնագրի հավելվածով սահմանված ժամկետներում, բայց ոչ ուշ քան 2017 թվականի դեկտեմբերի 25-ը:

1.3. 29.12.16թ. կնքված N ՊԵԿ-ԲԸՀ-ԾՁԲ-16/2 ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2017 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պատվիրատու	**Կատարող**
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե	«Արեմպա Ինթերնեյշնլ» ՍՊԸ ՖԶԵ
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7	Շարժա Աէրոպորտ
	Միջազգային Ազատ Գոտի
	P. O. Box 7975, Շարժա ԱՄԷ
ՀՀ ֆինանսների նախարարության	Habib Bank AG Zurich Deira Main Branch
աշխատակազմի գործառնական վարչություն	Dubai, United Arab Emirates
Հ/Հ 900011013902	Հ/Հ 20430-333-248474
ՀՎՀՀ 02647057	ՀՎՀՀ 00352
ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝	«Արեմպա Ինթերնեյշնլ» ՍՊԸ ՖԶԵ-ի լիազորված անձ՝
Ա.Սահակյան	**Լ.Տեգեյ**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

AREMPA INTL. LTD. FREE ZONE P.O.Box 7975, Sharjah-UAE

Հավելված
Հաստատված է
«29» դեկտեմբերի 2016թ. կնքված
N ՊԵԿ-ԲԸՀ-ԾՁԲ-16/2
գնման պայմանագրի փոփոխությամբ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը*	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում										
		փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	Մինչև 2017 թվականի դեկտեմբերի 25-ը	**Ընդամենը Տարի**
Ռենտգենյան զննող սարքավորումների սպասարկման ծառայությունների (ՀՀ ԿԱ ՊԵԿ Մեղրու և Գոգավան մաքսային կետերում տեղադրված Rapiscan Eagle Gantry 6(4,5) Mev մակնիշի ռենտգենյան զննող սարքավորումների տեխնիկական սպասարկման ծառայություններ)	5129	58 333 300	58 333 300	145 833 300	145 833 300	145 833 300	233 333 300	233 333 300	233 333 300	350 000 000	350 000 000	350 000 000	**350 000 000**

* Վճարվող գումարները ներկայացված են աճողական կարգով:

Պատվիրատու
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7

ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011013902
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝

Ա.Սահակյան
(ստորագրություն)

L.S

Կատարող
«Արեմպա Ինթերնեյշնլ» ՍՊԸ ՖԶԵ
Շարժա Էրոպորտ
Միջազգային Ազատ Գոտի
P. O. Box 7975, Շարժա ԱՄԷ
Habib Bank AG Zurich Deira Main Branch
Dubai, United Arab Emirates
Հ/Հ 20430-333-248474
ՀՎՀՀ 00352
«Արեմպա Ինթերնեյշնլ» ՍՊԸ ՖԶԵ-ի լիազորված անձ՝

Լ.Տեզել
(ստորագրություն)

L.S